



**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ  
ԷԴՎԱՐԴ ՏԱՐՈՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ**

*Հարգարժան Էդվարդ Տարոնի*

*ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ ծննդյան 65 ամյակի առթիվ:*

*Անգնահատելի է Ձեր ունեցած ներդրումն ու ավանդը Շիրակի մարզում դատաիրավական համակարգի կայացման ու ամրապնդման գործում:*

*Լինելով հոգսաշատ ու տարաբնույթ խնդիրներով լի տարածաշրջանի դատարանի նախագահ, Դուք այն դատավորներից եք, ով հավատարիմ մնացել արդարադատության արդարացի իրականացմանը: Անցած 32 տարիների երկար ու ձիգ մասնագիտական փորձն ու մարդկային բարձր արժանիքներն այսօր, հիրավի Ձեզ իրավունք են վերապահում անցնելու վաստակաշատ հանգստի: Օգտվելով ընեձեռնված առիթից իմ, մարզպետարանի և Շիրակի մարզի ողջ ազգաբնակչության անունից մեր շնորհակալությունն եմ հայտնում Ձեզ, Հայրենիքին մատուցած ծառայության համար:*

*Շնորհավորելով Ձեր ծննդյան տարեդարձն ի սրտե ցանկանում եմ ամենակարևորը քաջառողջություն, նպատակների իրականացում և հետագա հաջողություններ:*

*Ամենաջերմ բարեմաղթանքներով և հարգանքով՝*

*ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝*

**ՖԵԼԻՔՍ ՅՈՒԱԿՅԱՆ**

*25.08.2014թ.*